

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի, 2020 N 40

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ կետերով և հրամանագրի հավելվածի 27-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով ԱՀ Ասկերանի շրջանի վարչակազմի աշխատակազմի աշխատակիցների կողմից 2020 թվականի հուլիսի 9-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝ **ո Ր Ո Ղ ՈՒ Մ Ե Մ**.

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի գործունեության ծավալումը՝

1) Ա/Ձ «Դադայան Արտակ», գ.Իվանյան (ՀՎՀՀ 90754656).

2) «Օկեան» ՍՊԸ, գ.Իվանյան (ՀՎՀՀ 90001705):

2. ԱՀ Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. ԱՀ ոստիկանության պետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:



Գ. ԱՄՐՏԻՐՈՍՅԱՆ